

Քիւ 25917  
Յուլիս 12, 1978

Բարեշնորհ  
Վաչէ Սրկ. Նալպանեան  
Հոգեւոր Մասնաճիւղ  
Ս. Սարգիս Եկեղեցւոյ  
Նիակարա ֆիլ.ս.

Սիրելի Վաչէ Սարկաւազ,

Առաջած ենք Յուլիս 6, 1978 թուակիր գրութիւնդ: Գոհ մը-  
նացինք Ս. Սարգիս Եկեղեցւոյ համայնքային կեանքին մասին տը-  
լած տեղեկութիւններդ: Ինչպէս որ հեռավարային մեր խօսակ-  
ցութեան ընթացքին թեզի թելադրեցինք՝ շարունակէ քու ձեռնար-  
կած աշխատանքդ, եւ յոյս ունինք որ մտաւոր ապագային անհա-  
մաճայնութիւնները կը հարթուին եւ համայնքը կը վերագանէ իր  
անդորր եւ բնականոն կեանքը:

Ցանձարարած ենք որ շուտով թեզի զրկուին ապահովագրու-  
թեան անհրաժեշտ գաշտօնաթուղթերը:

Սիրոյ ողջունքիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՆԳԻՍԵՈՂՈՍ  
Առաջնորդ

Քիւ 25917  
Յուլիս 12, 1978

Բարեջնորհ  
Վաչէ Արկ. Նալպանեան  
Հոգեւոր Մատակարար  
Ս. Սարգիս Եկեղեցւոյ  
Նիակարա ֆիլս.

Սիրելի Վաչէ Սարկաւազ,

Ատացած ենք Յուլիս 6, 1978 թուակիր գրութիւնդ: Գոհ մը-  
նացինք Ս. Սարգիս Եկեղեցւոյ համայնքային կեանքին մասին տը-  
լած տեղեկութիւններդ: Ինչպէս որ հեռավայրային մեր խօսակ-  
ցութեան ընթացքին բեզի թելադրեցինք՝ շարունակէ բու ձեռնար-  
կած աշխատանքդ, եւ յոյս ունինք որ մտաւոր ապագային անհա-  
մաճայնութիւնները կը հարթուին եւ համայնքը կը վերագանէ իր  
անդորր եւ բնականոն կեանքը:

Յանձնարարած ենք որ շուտով բեզի դրկուին ապահովագրու-  
թեան անհրաժեշտ պաշտօնաթուղթերը:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԳՈՄ ԱՐԷՇԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

**Saint Sarkis Armenian Apostolic Church**



300 9th STREET  
NIAGARA FALLS, N. Y. 14303  
Phone: 282-2587

**Ս. ՍԱՐԳԻՍ ՉԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ**

**ԵԿԵՂԵՑԻ**

**ՆԻԱԿԱՐԱ ՖՈԼՍ**

**Յուլիս 6, 1978**

**Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմի Առաջնորդ  
Տ.Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին**

**Գերաշնորհ Արքազան Հայր,**

Ժամանակին ստացած եմ Ձերդ Արքազնութեան Յունիս 1, 1978 թուակիր նամակը: Ենթադրեալ ձեր նամակով ստացած եմ նաեւ իմ եւ տիկնոջս Փարիզ-Նիւ Եորք օդանաւային տոմսակներու ծախսը /750 տուար/:

Սիրելի Արքազան Հայր, այս նամակս դիտմամբ ուշացուցի որպէսզի աւելի ըսելիք ունենամ Ձեզանախ ըսեմ որ ամէն կիրակի կանոնավորաբար կը կատարեմ ժամուայ մը պաշտամունք: Ասկէ զատ եթէ Հոգեհանգիստ խնդրող կայ, կ'ընեմ նաեւ Հոգեհանգստեան արարողութիւնը:

Շուրջ երկու շաբաթ է որ սկսած եմ Հայոց Լեզուի ուսուցման դասընթացները. առայժմ ես կը դասաւանդեմ որովհետեւ յարմար եւ կարող թեկնածու մը չիկայ: Այս շաբաթ սկսեց նաեւ կիրակնօրեայ դպրոցի/Sunday School/ դասընթացներուն. Ալպէրթ Ամաթոն /Իտալացի Հայաստէրը/ մեծ ուրախութեամբ յանձն առաւ դասաւանդելու կրօնական նիւթերը: Անշուշտ մտազիր եմ հետեւելու իր ուսուցողական մեթոտին-ծրագրին: Երագրած ենք շուտով գիրքեր պատուիրել Նիւ Եորքի Առաջնորդարանէն թէ՛ Հայոց Լեզուի եւ թէ՛ կիրակնօրեայ դասընթացներուն համար: Այս բոլորէն զատ շաբաթը անգամ մը, փափագողները կու գան Ս. Գատարազի երգեցողութիւնը եւ Հայկական ազգային երգեր կը սորվին: Այս եւս առայժմ ես կը սորվեցնեմ:

Ընդհանրապէս ամիսը անգամ մը ժողով կ'ուսնեմ Մը-խական Խորհուրդի անգամներուն հետ: Հրատապ հարցեր ըլլալու պարագային յաւելեալ հանդիպումներ կ'ուսնեմ: Ծարդ անգամ մը հանդիպում ունեցած եմ Տիկնանց Միութեան հետ: Կուզէի կրկին հանդիպում մը ունենալ, բայց այս շրջանին կազմը լրիւ չէ, ոմանք հեռացած են քաղաքէն:

Ուսմանս համար, գացի եւ ուղղակի Նիակարա Ճուսի Համալսարանի Երկու գլխաւոր վարիչ-Տնօրէններուն տեսայ: Մանրամասն ինձնով հետաքրքրուեցան, մասնաւորաբար գիտցան թէ ինչ ուսում ունիմ: Երկուքն ալ եկեղեցական էին, մէկը վարդապետ իսկ միւսը սարկաւագ: Չմոռեմ ըսելու որ Համալսարանը Կաթոլիկ Միաբանութեան կը պատկանի: Իրենք ինձ բաւական գաղափար տուին համալսարանի դասընթացներուն եւ բաժանմունքներուն մասին: Արդէն զիմումնագիր Լեցուցած եւ զրկած եմ: Խոստացան Ս. էջմիածնի վկայական ընդունիլ որպէս **B. A.** ուրեմն այժմ ուսումս աւարտել է ետք պիտի ստանամ **M. A.**

Հետաքրքրուեցայ նաեւ տարեկան կրթնաթղակիս ծախսին մասին: Վարդապետը ըսաւ թէ եկեղեցականներուն զեղջ կ'ընեն. այնուամենայնիւ շուրջ 1800 տուարի ծախս ունիմ ուսմանս համար, անշուշտ չհաշուած կողմնակի ծախսերը գիրք, երթեւեկութիւն եւլն.:

Երկու խօսք ալ կ'ուզեմ գաղութի ներկայ վիճակին եւ ժողովուրդին տրամադրութեանց մասին ընել: Պէտք է ըսեմ որ այս փոքր գաղութը երկու մասի բաժնուել է զատ, իւրաքանչիւրը կարծէք ինքն իր մէջն ալ բաժանմունք ունի: Մասնաւորաբար եթէ նկատի ունենանք էջմիածնասէր ժողովուրդը, պիտի տեսնենք

**Saint Sarkis Armenian Apostolic Church**



**Ս. ՍԱՐԳԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ**

**ԵԿԵՂԵՑԻ**

300 9th STREET  
NIAGARA FALLS, N. Y. 14303

**ՆԻԱԿԱՐԱ ՖՈԼՍ**

Phone: 282-2587

Թէ անոնք եւս բաժնուած են երկու թիւով: Մուտք մը կայ որ երբեք եկեղեցի չի գար, եւ լրիւ խզուած են: Այս խումբէն ոմանց հետ տեսնուեցայ եւ կարելիս ըրի որ կրկին եկեղեցի գան ու ընդհանրապէս կապուած մնան Անոր: Ինծի ըսին թէ. «Քեզ կը յարգենք եւ պատրաստ ենք քեզ ամէն ձեւով օգնելու բայց, մեզ մի սպասեր որ եկեղեցի գանք, որովհետեւ Միսկան Խորհուրդի անդամները մեզմէ չեն ակործիր, մենք ալ զիրենք տեսնել չենք ուզեր»): Իմացայ թէ նախքան զալս, գաղութին մէջ անխորժ դէպքեր պատահած են, եւ ահա անոնց արդիւնքը: Սրբազան Հայր, ցաւօք սրտի պէտք է ըսեմ որ հոս պաշտօնավարած նախկին Հովիւներն ալ ճկուն չեն եղած եւ թոյլ տուած են կոպիտ սխալներ: Ոմանք կողմ բռնած են, ոմանք նիւթատէր եղած են եւ յարատեւ պահանջկոտ եղած են, ոմանք ծոյլ եղած են եւ անգիտակից իրենց կոչումին...: Ես անշուշտ, զիրենք լսելէ ետք կը շանամ հանդարտեցնել առանց դատելու: Ոմանք նոյնիսկ այնքան վշտացած էին նախկին եկեղեցականներէն, որ ինձ բացայայտօրէն ըսին. «Մենք այլեւս ոչ մէկ եկեղեցական չէինք ուզեր, բացց Սրբազանը ուզեց...»):

Սրբազան Հայր, այս բոլորը զրոյցի որպէսզի լաւ գիտնաք ժողովուրդին ներկայի տրամադրութիւնները: Այս բոլորը ես ալ գիտնալէ ետք, կը զգամ եւ կը պատկերացնեմ ուսերուս դրուած ծանր պարտականութիւնը: Ուրախութեամբ պէտք է ըսեմ որ այս բոլորը լսելէ ետք, երբեք չի յուսահատեցայ, ընդհակառակը, անելի աշխոյժ սկսայ գործել:

✓ Սրբազան Հայր, յետ այսու պիտի խնդրեմ որ եկեղեցիին եւ համայնքին վերաբերող նամակները առաքուին եկեղեցւոյ հասցէին: Յարգ Առաջնորդարանին եկած գրութիւնները կը ստանամ մեր ատենապետէն՝ Գրն. Արսէն Աւտոյեանէն:

✓ Առաջնորդարանի փաստաբան՝ Գր. Գաւազանճեանի խորհուրդը եւ Ձեր համաձայնութիւնը ստանալէ ետք, իմ եւ տիկնոջս Տեւական Բնակութեան / Application For Status as Permanent Resident / համար դիմումները առած եւ լեցուցած են: Եւ տուով, Գր. Գաւազանճեանի փափաքին համաձայն, դիմումները եւ անոնց կից տարբեր ու պահանջեալ փաստաթուղթեր պիտի առաքեմ ձեզ՝ Առաջնորդարան: Ստացուելու պարագային պիտի խնդրեմ որ Գր. Գաւազանճեանին իմաց տրուի, որպէսզի ինք պէտք եղած կարգադրութիւնները ընէ:

✓ Սրբազան Հայր, դժբախտաբար ցարդ չենք ստացած մեր Բժշկական Ապահովագրութեան վերաբերեալ թուղթերը: Տիկնոջս յղի ըլլալը ինձ կը ստիպէ որ ձեզմէ խնդրեմ անոնց շտապ առաքումը:

Այսքանը բաւ համարելով կը փակեմ գրութիւնս սպասելով Ձեր Հայրական խորհուրդներուն եւ թեւադրանքներուն:

Մատչիմ Ձեր Ս. Աշոյն՝  
Վաչէ Սրգ. Նալպետեան